ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 44-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 22-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ձևը սահմանելու մասին» թիվ 22-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերով կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ձևի 13-րդ կետը հանել,

2) ամբողջ տեքստում «քրեական հետախուզության գլխավոր վարչություն» բառերը փոխարինել «հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն» բառերով՝ բոլոր հոլովաձևերով:

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«18» 10 2022թ.

ք. Երևան